ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՕԼՅԱ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ
արվեստագիտության թեկնածու
ԵՊԿ

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՏԱՐԵԳԻՐՔ

Կոմիտաս եւ հայ միջնադարյան երաժշտություն – ազգային արվեստի անդադար զարգացման եւ երաժշտական ավանդույթի երկու գագաթները կապող անուններ: Հետեւողական եւ պատշաճ իրականացվող ուսումնասիրություններն ամեն անգամ հաստատում են եւ գործնական քայլերով ամրացնում հայագիտության դիրքերն ամբողջ աշխարհում: Հայտնի է՝ երկրի նկատմամբ արժանապատվություն ներարկելու ամենաազդեցիկ միջոցներից է մշակույթը: 2016 թ. Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի ջանքերով եւ հրատարակչությամբ լույս տեսած Տարեգիրքը՝ «Կոմիտասը եւ հայ միջնադարյան երաժշտական մշակույթը» գիտական հոդվածների ժողովածուն (խմբագրական խորհուրդ՝ Մհեր Նավոյան, Աննա Արեւշատյան, Աննա Ասատրյան, Լիլիթ Երնջակյան, Գայանե Ամիրաղյան, պատասխանատու խմբագիր՝ Տաթեւիկ Շախկուլյան), այդպիսի նշանակություն ունի: Անշուշտ, կոմիտասագիտության կայացման եւ զարգացման գործում իր ազդեցիկ դիրքում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի՝ յոթանասուն տարուց ավելի պատմություն ունեցող ներդրումը, եւ այս Տարեգիրքը դեռեւս 1969, 1981 թվականներին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի իրականացրած «Կոմիտասական» ժողովածուի երկու հատորներով հիմնադրված ավանդույթի յուրովի շարունակությունն է: Կոմիտասականը հայ գիտական մտքի վաղուց հաստատված հիմնարար բնագավառն է: Այն դուրս է եկել Կոմիտասի՝ հայ ազգային կոմպոզիտո-

բական դպրոցի հիմնադրի, բանահավաքի, երաժշտագետի, խմբավարի ու երգչի կենսագրության սահմաններից եւ դարձել հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին ու նրա ընթացքին առնչվող թեմա:

«Կոմիտասը եւ հայ միջնադարյան երաժշտական մշակույթը» ժողովածուն մի քանի դարաշրջանների ու երկրների, արվեստի տեսակների ու գիտական ոլորտների մեկտեղմամբ հանրագումարի է բերում հայ եւ օտարազգի առաջատար ու պատվարժան ուսումնասիրողների նոր եւ ամփոփ հայացքները, որոնց առանցքում բարձր ու պաշտելի երախտավորի կերպարն է եւ նրա գործունեությամբ սկզբնավորված ասպարեզները: Ներկայացվող քսանվեց հոդվածների հեղինակները Հայաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Կիպրոսի, Ռուսաստանի, Ֆրանսիայի գիտնականներն են, որոնք ներկայացնում են այնպիսի հեղինակավոր հաստատություններ, ինչպիսիք են՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանը, ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, Երեւանի պետական համալսարանը, Հայ հոգեւոր երաժշտության կենտրոնը, Ազգային երգ ու պարի ակադեմիան, Հանովերի երաժշտության, դրամայի եւ հաղորդակցության համալսարանի հրեական երաժշտության եվրոպական կենտրոնը, Նիկոսիայի երաժշտության համալսարանը, Փարիզի Մեզոն-Բլանշ բժշկական կենտրոնը, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանը (UCLA), Սանկտ Պետերբուրգի Ռուսական ազգային գրադարանը եւ Ն. Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիան:

Հոդվածագիրներից յուրաքանչյուրը համադրել եւ ուսումնասիրել է սեփական մասնագիտական հետաքրքրությունների եւ փորձի արդյունքում կուտակված հարցեր կամ նոր նյութեր: Տարեգրքի ծանրակշիռ մասն են կազմում մի քանի սերունդ ներկայացնող հայ երաժշտագետների աշխատանքները (Ալինա Փահլեւանյան, Աննա Արեւշատյան, Լիլիթ Երնջակյան, Մհեր Նավոյան, Անահիտ Բաղդասարյան, Աստղիկ Մուշեղյան, Աննա Ասատրյան, Հասմիկ Հարությունյան, Լուսինե Սահակյան, Մարիաննա Տիգրանյան, Գայանե Ամիրաղյան, Տաթեւիկ Շախկուլյան, Նիկոլայ Կոստանդյան, Լիլիթ Հարությունյան, Անի Մուշեղյան, Նանե Միսակյան), այստեղ են նաեւ պատմաբան Հռիփսիմե Պիկիչյանի, արվեստաբաններ Մերի Կիրակոսյանի, Մարգարիտա Քամալյանի, մշակութային գործիչ Գագիկ Գինոսյանի հոդվածները, իսկ արտերկիրը ներկա-

յացնում են Ռեգինա Ռանդհոֆերը, Ալիս Այվազյանը, Կլոդին Բելամին, Միշել Քեղը, Ալիսա Մաթիասը, Նատալյա Ռամազանովան, Տատյանա Շվեցը: Հեղինակների հոդվածները հրատարակված են բնագիր տարբերակով. արդյունքում ժողովածուն ներկայանում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով: Տարեգրքի յուրաքանչյուր հոդված ունի հայերեն, անգլերեն, ռուսերեն ամփոփում:

Ժողովածուի չորս գլուխները՝ «Կոմիտասը եւ իր ժամանակը», «Կոմիտասը եւ երաժշտական ֆոլկլորը», «Անդրադարձ Կոմիտասին» եւ «Միջնադարյան երաժշտություն» արտացոլում են գիտական ուսումնասիրությունների առանցքային նպատակները, որոշակի երեւույթի սահմանումը եւ դրա կառուցվածքի բազմակողմանի, հավաստի ուսումնասիրումը, ինչի հետեւանքով ստացված արդյունքները նոր հետազոտությունների հեռանկարներ են ուրվագծում:

Կոմիտասի գործունեությունը համեմատելի է ամբողջ աշխարհի մասշտաբով: Հետեւաբար՝ ժողովածուի հոդվածների թեմաների աշխարհագրությունն ու ժամանակը հասնում է մինչեւ հայ հոգեւոր երգարվեստի Ե. դար, Անիի թագավորություն, Մխիթարյանների Ս. Ղազար կղզի, Արմաշի դպրեվանք, ռուսական հոգեւոր արվեստի ԺԷ. դար, ժամանակակից եվրոպական ու ամերիկյան համերգային իրականություն եւ Սփյուռք, իսկ անմիջապես Կոմիտասի կյանքին անդրադարձող ուսումնասիրություններում Բեռլինն է (Գերմանիայի ազգային պետության կերտման մթնոլորտը Կոմիտասին խթանեց մշակել հայկական ազգային երաժշտության սեփական նախագիծը, Ի. դարի սկզբին նա համաքայլ էր երաժշտագիտության վաղ ստեղծարար ժամանակաշրջանին), Կ. Պոլիսը (որտեղ մինչեւ Կոմիտասի գործունեությունը երգված գռեհիկ ու անստվեր երգերը գործածությունից դուրս էին գալիս, իսկ Օսմանյան կայսեր արարողապետը մի անգամ ասել էր, թե 800 տարվա պետություն ենք եւ այսպիսի արվեստագետ չունենք), Փարիզը եւ Ռուսական կայսրությունը (Կոմիտասը հայերի ճակատագիրը կապում էր Ռուսական կայսրության հետ, նրան առաջին լուրջ գնահատականները տվել են ռուսական մշակույթի գործիչները):

Կարեւոր է ժողովածուի ընդգծված մշակութաբանական կողմը, որտեղ երաժշտության, գեղանկարչության, պարարվեստի բնագավառների տարբեր ընդգծումներով ներկայացվում են Կոմիտասի անձին ու անվանն անմիջականորեն առնչվող (Փանոս Թերլեմեզյան եւ «Աստեղատուն» հիմնադրամ, Մարգարիտ Բաբայան եւ Կոմիտասի ընկերների կոմիտե) եւ

տարբեր ժամանակաշրջանների հայ եւ համաշխարհային պատմության երեւելիների (Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Ներսես Շնորհալի, Գեւորգ Դ. Մեծագործ կաթողիկոս, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Սեբաստացի, Գրիգոր Գապասաքալյան, Համբարձում Զերչյան, Նիկողայոս Թաշճյան, Եղիշե Զարենց, Քրիստափոր Քուշնարյան, Ռուբեն Զարյան, Մաթեւոս Մուրադյան, Ռոբերտ Աթայան, Գեւորգ Գյոդակյան, Սրբուհի Լիսիցյան եւ այլք) անունները:

Հեղինակները երեւան են հանել ու հավաքել նոր փաստեր, որոնք իմաստավորվում են այսօրվա գեղարվեստական հոգեբանության հիմքի վրա. հայ արվեստի նշանակությունը գիտակցելու առումով կարեւոր է վերարժեւորել եւ գործուն մաս կազմել «Անատոլիայի երաժշտական ավանդույթ» հասկացության հարցում, իսկ աշխարհաքաղաքական լուրջ վերափոխումների ու կրոնական արմատականության մեր օրերում երաժշտությունն է միակ լեզուն, որի միջոցով հնարավոր կլինի հասնել երկխոսության: Այդ տեսանկյունով է դիտարկվում Կոմիտասի կոմպոզիտորական գործունեությամբ համերգային կյանք ստացած հայ ժողովրդական երաժշտության անհրաժեշտ ներկայությունը համբավավոր երաժիշտների նվագացանկում (Ժորդի Սավալ, Յան Գարբարեկ, «Հիլլիարդ» եւ «Շանտեկլեր» անսամբլներ): Սա աշխարհի հետ հաղորդակից լինելու գործուն միջոցներից մեկն է:

Ժողովածուի առանձին հեղինակների անվիճելի վաստակն են նորահայտ փաստերը (օրինակ՝ դեռեւս միջնադարից եկող հայ-բյուզանդական երաժշտական կապերի մասին վկայությունը, գիտական նյութից բեմական եւ ստեղծագործական նյութի փոխակերպման մասին արձանագրելը): Այստեղ առանձնանում են Կոմիտասի կյանքին եւ անձին վերաբերող մի քանի շեշտադրումներ, որոնք հիմնվում են նամակագրության ու բժշկական արխիվային փաստաթղթերի բովանդակության վերլուծության վրա: Երաժշտատեսական խմբին պատկանող հոդվածներում դիտարկվում, վերլուծվում են ժողովրդական (լորիկ) ու հայ, ռուսական հոգեւոր երաժշտության առանձին ժանրերը (տաղ, մեղեդի, ստիխիրա) եւ Ժամագիրքը: Նաեւ ընդհանրացվում են կոմիտասյան մեթոդի հիմնական սկզբունքները, որոնք վերաբերում են ութձայն համակարգի ուսումնասիրությանը, առանձին ավանդույթների համեմատությանը, քննվում են այլ արտահայտչամիջոցներին վերաբերող հարցեր (պոլիմետր, «կոմիտասյան համահնչյուն», ռիթմի, մետրի գրառումը ֆոլկլորում, նաեւ ստիխիրա):

Հայ երաժշտության, արվեստի զարգացմանը նախանձախնդիր ամեն հետազոտող եւ ստեղծագործող նախ պետք է լիովին ուսումնասիրի եւ հասկանա Կոմիտասին. սրանում է Տարեգրքի արժեքը: «Կոմիտասը եւ միջնադարյան երաժշտական մշակույթը» հոդվածների ժողովածուն հասցեագրված է երաժշտագետներին, արվեստաբաններին, միջնադարագետներին, ֆոլկլորագետներին, ինչպես նաեւ հայ երաժշտությամբ հետաքրքրվողներին: